ՀՈԴՎԱԾՆԵՐ

# ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅԱՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

ՍՏԵՓԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

*Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո Վ. Ի. Լենինը հանճարեղ խորաթափանցությամբ մատնանշեց, որ «մրցության կազմակերպումն աչքի ընկնող տեղ պետք է գրավի սովետական իշխանության խնդիրների մեջ տնտեսական բնագավառում»[1]։ Նա գտնում էր, որ սոցիալիզմի բարդ պրոբլեմների լուծման մեջ մրցությունն ընձեռում է ստեղծագործական անսպառ հնարավորություններ։ «Սոցիալիզմը ոչ միայն չի մարում մրցությունը,— գրում էր Վ. Ի. Լենինը,—այլ, ընդհակառակը, առաջինն է հնարավորություն ստեղծում իրոք լայնորեն կիրառելու այն, իրոք մասսայական չափով, իրոք աշխատավորների մեծամասնությանը ներգրավելու այնպիսի աշխատանքի ասպարեզ, որտեղ նրանք կարող են երևան բերել իրենց, ծավալել իրենց ընդունակությունները, դրսևորել տաղանդներ, որոնք ժողովրդի մեջ անսպառ աղբյուր են և որոնց կապիտալիզմը ճմլել, ճնշել, խեղդել է հազարներով ու միլիոններով»[2]։*

*Որպես կոմունիստական շինարարության քննություն բռնած մեթոդ՝ մրցությունը զարգացած սոցիալիզմի կառուցման պայմաններում* դարձավ արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների հզոր առաջմղիչ, մեծապես նպաստելով աշխատավորության սոցիալ-քաղաքական ակտիվության զարգացմանը։*

*Սոցիալիզմի պայմաններում աշխատավորն ամենայն լրջությամբ է մատեցվում աշխատանքի արտադրողականության բարձրացման հարցերով։ Նա սոցիալիստական էկոնոմիկայի զարգացման մակարդակի աճը և տպառման պահանջների լրիվ բավարարումն առաջին հերթին տեսնում է իր գործունեության ու ներդրման մեջ։ Աշխատավոր մարդու համար, ինչպես մատնանշում էր Վ. Ի. Լենինը, «Ուրիշի համար հարյուրամյակներ աշխատելուց, շահագործողների համար հարկադրական աշխատանք կատարելուց հետո առաջին անգամ է հնարավորություն ստեղծվում իր համար աշխատելու, այն էլ այնպիսի աշխատանքի հնարավորություն, որը հենվում է նորագույն տեխնիկայի ու կուլտուրայի բոլոր նվաճումների վրա»[3]։*

*Որպես մարդկանց միջև հասարակական կապի կատարյալ ձև, յոթնամյակի և 8-րդ հնգամյակի տարիներին մեր երկրում սոցիալիստական մրցու-*

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 242։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 493—494։

* Հոդվածը գրված է հիմնականում ՀԿԿ 1959—1970 թթ. գործունեության նյութերի հիման վրա։

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 495։

թյունը շարունակեց զարգանալ ինչպես խորությամբ, այնպես էլ լայնությամբ, գործնականում ընդգրկելով ամբողջ զբաղված բնակչությանը։ 1965 թ. երկրում սոցիալիստական մրցության մեջ էին ներգրավված աշխատավորական հսկայական զանգվածներ։ Մրցությանը մասնակցում էին բանվորների և ծառայողների շուրջ 90%-ը[4]։

Հայկական ՍՍՀ արդյունաբերության մեջ այդ ժամանակամիջոցում կոմունիստական աշխատանքի կոչման համար պայքարում էին շուրջ 57 հազար մարդ, 4944 բրիգադ, 952 տեղամաս, հերթ, արտադրամաս, 91 ձեռնարկություն[5]։

Սոցիալիստական մրցության կուսակցական ղեկավարման մակարդակի բարձրացման և նրա հետագա կատարելագործման ասպարեզում կարևոր նշանակություն ունեցան ՍՄԿԿ XXI, XXII և XXIII համագումարների հանձնարարականները։

Մրցության կազմակերպման տեսական և պրակտիկ խնդիրները դարձան նաև Հայաստանի կոմկուսի համագումարների, Կենտկոմի պլենումների և բյուրոյի նիստերի համակողմանի վերլուծությունների առարկան, ենթարկվեցին գիտական խորը մշակման և կատարելագործման։ Հայաստանի կուսակցական և արհմիութենական մարմինները, ելնելով նոր պահանջներից, նկատելիորեն բարելավեցին մրցության ղեկավարումը։ ՀԿԿ Կենտկոմը, կուսակցության քաղաքային, շրջանային կոմիտեները, արդյունաբերական ձեռնարկությունների և հաստատությունների սկզբնական կուսակցական կազմակերպությունները հաշվի առնելով ՀՍՍՀ յուրաքանչյուր կոնկրետ շրջանի, գոտու տնտեսական կշիռը և առանձնահատկությունները, սկսեցին հաջողությամբ լուծել մրցության կուսակցական ղեկավարման բարդ պրոբլեմները։

Անմիջապես արտադրության տլորտում աշխատող կուսակցական ու արհմիութենական կազմակերպությունները սկսեցին հետևողական պայքար մղել հանրապետության բանվորների, մասնագետների և ծառայողների բազմահազարանոց բանակի աշխատանքային ակտիվության բարձրացման ուղղությամբ։

Հայաստանի կոմկուսի Կենտկոմը և կուսակցական կոմիտեները բացառիկ կարևորություն տվեցին արտադրական մրցակցության ձևերի կատարելագործմանը, այդ ասպարեզում երբեմն իրեն զգացնել տվող ձևականության դրսևորումների վերացմանը և մրցությունը գիտական ամուր հիմքերի վրա դնելու խնդիրներին։

Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայկական ՍՍՀ-ում մրցության գործարարության ապահովման, նրանում եղած հնարավորությունների առավել արդյունավետ օգտագործման հիմնական միջոցները հանդիսացան դեմոկրատական ցենտրալիզմի ըստ ամենայնի արմատավորումը, անկախակալությունը, հրապարակայնությունը, արդյունավետությունը, պայմանագրային սկզբունքի զարգացումը, փոխօգնությունը, աշխատավորական մասսաների նյութական և բարոյական խթանման ազդակների միասնությունը և այլն։ Այս գումարելիների վճռական դերը նկատի ունենալով՝ հանրապետության կու-

[4] Центральный государственный архив Октябрьской революции СССР (ЦГАОР СССР), ф. 5451, оп. 24, д. 2491, л. 23.

[5] «Стенографический отчет XXIV съезда Коммунистической партии Армении от 3—5 марта 1966 г.», стр. 15.

սակցական, արհմիութենական և կոմերիտական կազմակերպությունները սկսեցին մրցության ղեկավարմանը կոմպլեքսային մոտեցում ցուցաբերել։

Նկատելով այն բանից, որ սոցիալիստական մրցության գլխավոր նպատակը ժողովրդական տնտեսության զարգացման պետական պլանների կենսագործումն է, Հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների կուսակցական և արհմիութենական կազմակերպությունները, քաղաքային և շրջանային կոմիտեները այդ պլանները սկսեցին դնել տնտեսապես հիմնավորված սոցիալիստական պարտավորությունների հիմքում։ Նրանք հասան այն բանին, որ մրցության պարտավորությունները սկսեցին կազմվել հաջորդ տարվա պլանային առաջադրանքների նախագծին զուգահեռ։ Դա ձեռնարկություններին հնարավորություն տվեց ոչ միայն իրենց գործունեության մեջ առաջնորդվելու միասնական փաստաթղթով, այլև մի հոսանքի մեջ դնելու պլանի և սոցիալիստական պարտավորությունների կատարման համար մղվող պայքարը։

Դեռևս ՍՄԿԿ XXI Համագումարի օրերին ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում լայն ծավալ ընդունեց ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանը ժամկետից շուտ կատարելու համար ծավալված սոցիալիստական մրցությունը[6]։ Բացի այդ, արձագանքելով կոմերիտական ղեկավար աշխատողների համամիութենական սեմինար խորհրդակցության յոթնամյա պլանը հինգ տարում ավարտելու նախաձեռնությանը[7], Հանրապետության արդյունաբերական շատ ձեռնարկությունների կոմերիտական կազմակերպություններ սկսեցին երիտասարդ բանվորների օրվա ծանրաբեռնվածությունը պլանավորել «յոթ-հինգ» սկզբունքով, իսկ առանձին ձեռնարկություններում մրցության անհատական պայմանագրերը կազմվեցին յոթնամյակը հինգ տարում ավարտելու հաշվով։

Հանրապետության կուսակցական կազմակերպություններն ամեն ինչ արեցին, որպեսզի յոթնամյակի հենց առաջին օրերից բոլոր ձեռնարկություններում ապահովվեին աշխատանքի հստակ ռիթմը, պետական պլանային առաջադրանքների և սոցիալիստական պարտավորությունների կատարումը։

Յոթնամյակի առաջադրանքները ժամկետից շուտ կատարելու նպատակով Երևանի էլեկտրատեխնիկական գործարանի և «Հայէլեկտրալույս» արտադրական միավորման օրինակով Հանրապետության բոլոր արդյունաբերական ձեռնարկությունների աշխատավորական կոլեկտիվները յոթնամյակի յուրաքանչյուր տարում պետական առաջադրանքները նվազագույնը 103,5%-ով կատարելու պարտավորություններ ստանձնեցին[8]։

Սոցիալիստական մրցության կուսակցական ղեկավարումը, ի տարբերություն տնտեսական մարմինների մեթոդների, իրագործվում էր առանձնահատուկ եղանակով։ Կուսակցական կոմիտեներն ամենից առաջ շեշտը դնում էին քաղաքական ղեկավարման վրա, որի գլխավոր միջոցը շարունակեցին մնալ մասսաների շրջանում տարվող կազմակերպական և բացատրական աշխատանքները։ Նրանք շարունակում էին կադրերին դաստիարակել ՍՄԿԿ տնտեսական և սոցիալական քաղաքականությունը կյանքում հետևողա-

---

6 Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի (ՄԼԻ) արխիվ, ֆ. 1, ց. 83, գ. 180, թ. 93։

7 Центральный архив ВЛКСМ, ф. 1, оп. 5, д. 707, л. 39.

8 ՄԼԻ արխիվ, ֆ. 32, ց. 24, գ. 6, թ. 109։

կանորեն արմատավորելու, կառավարման ժամանակակից մեթոդներին տիրապետելու և կուսակցության դիրեկտիվներն անշեղորեն կենսագործելու ոգով։

ՀԿԿ կազմակերպական և քաղաքական աշխատանքների արմատական բարելավման շնորհիվ ապահովվեց կոլեկտիվների բարձր խանդավառությունը ներքին ռեզերվների ինտենսիվ որոնման և օգտագործման, ինչպես նաև աշխատանքային կարգապահության ամրապնդման գործում։

Հանրապետության բոլոր արդյունաբերական ձեռնարկություններում նոր առաջադրանքներին համապատասխան վերանայվեցին սոցիալիստական մրցության պայմանները, արմատավորվեցին մրցության կազմակերպման նոր արդյունավետ ձևեր ու մեթոդներ, բարձրացվեց արհմիութենական և կոմերիտական կազմակերպությունների դերն աշխատավորների ստանձնած պարտավորությունների կատարման գործում։

Մրցության կազմակերպումն առավել լուրջ հիմքերի վրա դնելու նպատակով ՀԱՄԽ-ին առընթեր ստեղծվեց սոցիալիստական մրցության պրոբլեմներով զբաղվող գիտամեթոդական խորհուրդ, որն սկսեց ակտիվ ջանքեր գործադրել սոցիալիստական մրցության կազմակերպական ձևերի ու մեթոդների կատարելագործման և այն գիտական սկզբունքների վրա դնելու ուղղությամբ։ Այսպես, օրինակ, խորհուրդը համակողմանիորեն ուսումնասիրեց հանրապետության արդյունաբերության մի շարք ճյուղերի (գունավոր մետալուրգիայի, էլեկտրատեխնիկական արդյունաբերության և այլն) ձեռնարկություններում արտադրության արդյունավետության բարձրացման գործում բարոյական և նյութական ազդակների զուգակցման դրվածքը և օգտակար հանձնարարականներ տվեց այդ աշխատանքների արդյունավետ կազմակերպման տեղությամբ։

Արդյունաբերության կառավարման կատարվածքի փոփոխության հետ կապված՝ Հայկական ՍՍՀ-ում նկատելիորեն մեծացավ ճյուղային արհմիությունների դերը։ Վերջիններս գործարար կապեր հաստատեցին մինիստրությունների հետ, սկսեցին ավելի լրջորեն զբաղվել տվյալ ճյուղի զարգացման հարցերով։ Ձեռնարկությունների տեղական արհմիութենական կազմակերպություններին համակողմանի օգնություն ցույց տրվեց ճյուղային մրցության զարգացման և ընդլայնման գործում։

Հանրապետության կուսակցական և արհմիութենական կազմակերպությունները մեծ տեղ հատկացրին նաև բրիգադային, աշխատամատյանային, հերթափոխային, միջձեռնարկային, քաղաքային և միջհանրապետական մրցության կազմակերպմանը։

ՀԿԿ Կենտկոմի բյուրոն 1967 թ. հունվարին որոշում ընդունեց «Սոցիալիստական մրցության հետագա զարգացման և եղբայրական հանրապետությունների աշխատավորության հետ բարեկամական կապերի ընդլայնման միջոցառումների մասին»։ Այս որոշումը նոր թափ հաղորդեց ինչպես եղբայրական հանրապետությունների, այնպես էլ առանձին քաղաքների աշխատավորների սոցիալիստական մրցությանը։ Մասնավորապես արգասաբեր էր Կիև—Երևան, Կիրովական—Սումգայիթ—Բաթումի, ինչպես նաև Լենինական—Քութահիա—Կիրովաբադ քաղաքների աշխատավորության սոցիալիստական մրցությունը։ Վերջիններիս մրցությանը յոթնամյակի տարիներին միացան նաև Ուլյանովսկի և Տարտուի աշխատավորները։

Ուկրաինայի կոմկուսի Կիևի քաղաքային կազմակերպության XVIII կոնֆերանսը բարձր գնահատեց Կիև—Երևան մրցության նշանակությունն այդ քաղաքներին առաջադրված տնտեսական և սոցիալական խնդիրների հաջող լուծման գործում[9]։ Ադրբեջանի կոմկուսի XXII համագումարը, բնութագրելով եղբայրական հանրապետությունների միջև ծավալված սոցիալիստական մրցությունը, նշեց, որ «Ադրբեջանի աշխատավորության սոցիալիստական մրցությունը Ուկրաինայի, Ուզբեկստանի, Վրաստանի, Մոլդավիայի և Հայաստանի աշխատավորների հետ բարենպաստ ներգործություն է ունենում հանրապետության առջև կանգնած տնտեսական լուրջ խնդիրների իրականացման գործում»[10]։ Վրաստանի կոմկուսի XXVIII համագումարն այս մրցությունը բնութագրեց որպես «բոլոր հանրապետությունների աշխատավորության ստեղծագործական ուժերի և նախաձեռնության խթանման անգերազանցելի միջոց»[11]։

Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը ՍՍՀՄ-ում կոմունիզմի կառուցումը դիտում է որպես սովետական ժողովուրդների ինտերնացիոնալ մեծ խնդիր։ Պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշի ներքո սոցիալիստական ազգերի մերձեցումը նպաստեց այդ ժողովուրդների սոցիալական, տնտեսական և քաղաքական համագործակցության հետագա ընդլայնմանը։ Կոմունիստական կուսակցության կողմից հանրապետությունների տնտեսական ինտեգրացման իրագործումը և հազարավոր ձեռնարկությունների միջև տնտեսական լայն կապերի զարգացումը կարևոր խթան հանդիսացան սոցիալիստական մրցության զարգացման համար և աննախընթաց կերպով ընդարձակեցին մեր երկրի աշխատավորների գործարար կապերը։

Մոսկվայի, Լենինգրադի և մյուս առաջատար քաղաքների կուսակցական կազմակերպությունները դարձան բազմաթիվ հայրենանվեր նախաձեռնությունների պիոներներ, առաջավոր փորձի տարածողներ։ Այդ նախաձեռնությունները ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայկական ՍՍՀ-ում խնամքով ուսումնասիրվեցին և լայն կիրառում գտան։

Յոթնամյա պլանի տիրեկտիվների համաժողովրդական քննարկման ժամանակ Մոսկվայի երկաթուղայինների նախաձեռնությամբ ծնունդ առավ նաև մրցության նոր՝ կոմունիստական աշխատանքի հայրենասիրական շարժումը։

Ինչպես նշեց ՍՄԿԿ XXV համագումարը, այդ շարժումը ցույց տվեց, թե ինչպես պետք է աշխատել հանուն կոմունիզմի։ Կոմունիստական աշխատանքի համար շարժումը արդյունք էր երկրի արտադրողական ուժերի հզոր վերելքի և աշխատավորների կուլտուր-տեխնիկական մակարդակի, գիտակցականության և նյութական բարեկեցության բարձրացման։

Մասսաների ստեղծագործական ակտիվության աճի հիման վրա անընդհատ զարգացավ և կատարելագործվեց մրցությունը։ Այն սոցիալիստական հասարակական հարաբերությունների և աշխատանքային կարգապահության դաստիարակման կուսակցության ամենօրյա աշխատանքի արդյունքն էր։ Կոմունիստական աշխատանքի շարժման մասնակիցները սկսեցին վերցնել

---

9 Центральный партийный архив Института марксизма-ленинизма при ЦК КПСС (ЦПА ИМЛ при ЦК КПСС), ф. 17, оп. 58, д. 985, л. 19.

10 Նույն տեղում, ֆ. 1, թ. 40։

11 Նույն տեղում, ֆ. 161, թ. 69։

բարձր, որակապես նոր պարտավորություններ, իրենց առջև խնդիր դնելով աշխատել և ապրել կոմունիստաբար։ Այսպիսով, կոմունիստական աշխատանքին բնորոշ տարրերը ծնվեցին զարգացած սոցիալիզմի կառուցման պայմաններում և վառ դրսևորում գտան այդ շարժման մեջ։

Հայաստանում կոմունիստական աշխատանքի բրիգադների և հարվածային շարժումը ծավալվեց 1958 թ. նոյեմբերից և ընդգրկեց ժողովրդական տնտեսության գրեթե բոլոր ճյուղերը։

ՀԿԿ Կենտկոմի բյուրոն 1958 թ. դեկտեմբերի 3-ին քննության առնելով հանրապետությունում կոմունիստական աշխատանքի շարժման վիճակը, ցույց տվեց, որ այն լայն մասշտաբներ է ընդունել Վ. Ի. Լենինի անվան հայէլեկտրատեխնիկական գործարանում, Ալավերդու պղնձաքիմիական և Երևանի Ս. Մ. Կիրովի անվան քիմիական կոմբինատներում, Երևանի Վ. Ի. Լենինի անվան մետաքսագործվածքային, Լենինականի Ս. Լուկաշինի անվան մանվածքային ֆաբրիկաներում և բազմաթիվ այլ ձեռնարկություններում[12]։

Կոմունիստական աշխատանքի շարժման հետագա ծավալման համար նոր խթան հանդիսացավ ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի 1959 թ. ապրիլին ընդունած «Հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների կոմունիստական աշխատանքի բրիգադների և հարվածայինների աշխատանքի մասին» որոշումը։ Կենտկոմը քաղաքային և շրջանային կոմիտեների, ձեռնարկությունների սկզբնական կուսակցական, արհմիութենական և կոմերիտական կազմակերպությունների խնդիրը համարեց կոմունիստական աշխատանքի շարժման ըստ ամենայնի արմատավորումը և այդ աշխատանքներում դրսևորվող ֆորմալիզմի երևույթների վերացումը։ Հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների կոմերիտական կազմակերպությունները նույնպես մեծ ակտիվություն հանդես բերեցին կոմունիստական աշխատանքի շարժման ծավալման գործում։ Երևանի Վ. Ի. Լենինի անվան մետաքսի կոմբինատում 1960 թ. սկզբներին ծնունդ առավ կոմերիտական փարոսների շարժումը։ ԼԿԵՄ կոմիտեի նախաձեռնությամբ ստեղծվեցին 30 կոմերիտական-երիտասարդական բրիգադներ, որոնք մրցություն ծավալեցին կոմունիստականի բարձր կոչման արժանանալու համար[13]։ 1962 թ. սկզբներին հանրապետության 1600 ձեռնարկություններում ծավալված սոցիալիստական մրցության մեջ ներգրավված էին 45 հազար կոմերիտականներ և երիտասարդներ։

Սոցիալիստական մրցության կուսակցական ղեկավարման արդյունավետ ձևերից էին նաև հանրապետության առաջավոր ձեռնարկություններում մրցության կազմակերպման լավագույն փորձի ուսումնասիրումը, կուսակցական կոմիտեների ընդլայնված նիստերում դրանց արդյունքների համակողմանի քննարկումը և կուսակցական օրգանների ընդհանրացված փաստաթղթերը տվյալ քաղաքի կամ շրջանի մեջ մտնող բոլոր կազմակերպություններն ուղարկելու պրակտիկան։ Դա նորի արմատավորման արդյունավետ ձևերից մեկը դարձավ։ Այսպես, օրինակ, հանրապետության աշխատավորական կոլեկտիվները մեծ հետաքրքրությամբ ուսումնասիրեցին և արմատավորեցին Երևանի ալյումինի գործարանի, «Հայէլեկտրալույս» արտադրական միավորման և Ս. Մ. Կիրովի անվան քիմիական կոմբինատի կուսակցական կոմիտեների սո-

12 Նույն տեղում, գ. 44, թ. 245։

13 Центральный архив ВЛКСМ, ф. 1, оп. 5, д. 22, л. 21.

ցիալիստական մրցության կազմակերպման փորձը։ 8-րդ հնգամյակում ծնունդ առավ նաև մրցության կուսակցական ղեկավարման այնպիսի ձև, ինչպիսին է, կուսակցական մարմիններում հնգամյակի առաջավորների և նորարարների հաղորդումները և հաշվետվությունները լսելը։ ՀԿԿ Լենինականի քաղաքային կոմիտեն, օրինակ, ընդհանրացրեց սոցիալիստական աշխատանքի հերոս, Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատի ենթավարպետ Գ. Տոնոյանի, իսկ ՀԿԿ Շահումյանի շրջանային կոմիտեն՝ սոցիալիստական աշխատանքի հերոս, Վ. Ի. Լենինի անվան մետաքսի կոմբինատի ջուլհակուհի Ծ. Դալեմտերյանի առաջավոր փորձը։

ՍՄԿԿ XXII և XXIII համագումարների նախօրյակին հանրապետությունում կոմունիստական աշխատանքի նշանաբանով ծավալված սոցիալիստական մրցությունը նոր թափ ստացավ։ Այս փուլում մրցությունը նշանավորվեց Վիշնի Վոլոչեկ քաղաքի տեքստիլ կոմբինատի առաջավոր բանվորուհի Վ. Գագանովայի նոր նախաձեռնությամբ։ Հայաստանում Վ. Գագանովայի հետևորդներ դարձան Լենինականի Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատի մանողների բրիգադիր Ս. Գասպարյանը, Երևանի ավտոպահեստամասերի գործարանի մեխանոֆիկական արտադրամասի վարպետ Հ. Հուբասարյանը, Երևանի ալյումինի գործարանից Բ. Նավասարդյանը, Երևանի նուրբ բրդյա գործվածքների կոմբինատից Պ. Պետրոսյանը և հարյուրավոր այլ բանվորներ։

Վ. Գագանովայի նախաձեռնությունն արտահայտվեց ավելի բարձր վարձատրվող առաջավոր բրիգադից ետ մնացող բրիգադ փոխադրվելու և վերջինս առաջավորի մակարդակի բարձրացնելու մեջ։ Դա սոցիալիստական բարոյականության և սովետական մարդկանց բարձր գիտակցականության արտահայտությունն էր։

Կոմունիստական աշխատանքի համար մրցությունը հետագայում ընդգրկեց նաև ամբողջ կոլեկտիվներ, ձեռնարկություններ, քաղաքներ։

Սոցիալիստական մրցության կազմակերպումն առավել բարձր հիմքերի վրա դնելու, բանվոր-ծառայողների քաղաքական ու տնտեսական գիտելիքները հարստացնելու և առաջավոր փորձի պրոպագանդման նպատակով հանրապետության մի շարք ձեռնարկություններում ստեղծվեցին կոմունիստական աշխատանքի դպրոցներ։ Այսպես, օրինակ, Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանում ստեղծվեցին 26 այդպիսի դպրոցներ, որոնցում ընդգրկվեցին 670 ունկնդիրներ։ Այս նպատակով ստեղծվեց նաև 14 հոգուց բաղկացած մեթոդական խորհուրդ և մշտական գործող սեմինար[14]։

Յոթնամյակի պլանները ժամկետից շուտ կատարելու նպատակով երկրում ծավալված սոցիալիստական մրցությունը կյանքի կոչեց մասսաների բազմաթիվ նոր նախաձեռնություններ։ Այս էտապում մրցության բնորոշ առանձնահատկությունն այն էր, որ յուրաքանչյուր աշխատող ստանձնած պարտավորության նկատմամբ հանդես էր բերում իսկական պետական վերաբերմունք։ Սոցիալիստական մրցության նոր դերի խորը ընկալումը, փուսկազմակերպությունների կողմից մրցության ղեկավարման բարելավումը, էկոնոմիկայի և երկրի սոցիալական զարգացման կուրսի հետևողական կիրառումը, կազմակերպական և քաղաքական աշխատանքի արմատական բարե-

[14] Архив ВЦСПС, ф. 1, оп. 45, д. 422, л. 99.

լավումն ու արտադրական կոլեկտիվների բարձր խանդավառությունն ապահովեցին յոթնամյակի առաջադրանքների հաջող կատարումը։

Արդյունաբերական արտադրանքի ծավալով ՀՍՍՀ-ում յոթնամյակի կոնտրոլ թվերը գերակատարվեցին։ Նախատեսված 80-ի փոխարեն արտադրանքի ծավալն ավելացավ 84%-ով։ 1958 թ. համեմատությամբ արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը 1965 թ. ավելացավ ավելի քան 2 անգամ[15]։

ՍՄԿԿ XXIII և XXIV համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում Հայաստանի կոմկուսը մեծ աշխատանքներ կատարեց սոցիալիստական մրցության՝ որպես մասսաների հեղափոխական ստեղծագործության կենդանի արտահայտության, ծավալման և կատալիզացման ուղղությամբ։ Առանձնահատուկ ուշադրություն դարձվեց արտադրության արդյունավետության ու աշխատանքի որակի բարձրացման խնդիրներին։ Տեղերում կուսակցության նոր առաջադրանքներին համապատասխան վերանայվեցին սոցիալիստական մրցության պայմանները, ստեղծվեցին ստանձնած պարտավորությունների կատարման վերահսկման արդյունավետ մեթոդներ։ Մրցությունը, հիրավի, դարձավ համաժողովրդական։ Նրանում ընդգրկվեցին բոլոր բանվորները, ինժեներատեխնիկական աշխատողներն ու ծառայողները։

8-րդ հնգամյակում սոցիալիստական մրցության կարևոր առանձնահատկությունը դարձավ նաև նրա գործունեության շրջանակների նկատելի ընդլայնումը։ Մրցությունն ընդգրկեց հասարակական զարգացման բոլոր ասպարեզները՝ արտադրությունը, սպասարկման և կառավարման ոլորտը, գիտության ու կուլտուրայի բնագավառները։ Զգալիորեն հաղթահարվեցին մրցության կազմակերպման այնպիսի թերություններ, ինչպիսիք էին ցուցանիշների ոչ կոնկրետությունը, մրցության ղեկավարման մակերեսայնությունը, արտադրության էկոնոմիկայի և ստանձնվող պարտավորությունների բովանդակության մեջ չխորանալը և այլն։

Ձեռնարկությունների տնտեսական գործունեության գնահատման չափանիշների վերանայումը ներազդեց նաև մրցության բովանդակության և նպատակամղվածության վրա։ Եթե ոչ հեռու անցյալում մրցության մասնակիցների գլխավոր նպատակը համախառն արտադրանքի պետական առաջադրանքների գերակատարումն էր, ապա ելնելով ՍՄԿԿ XXIII համագումարի պահանջներից, մրցության մասնակիցներն իրենց ջանքերը սկսեցին կենտրոնացնել արտադրության արմատական ցուցանիշների, տեխնիկայի և էկոնոմիկայի վճռական հարցերի վրա։ Այսպես, օրինակ, Երևանի կաբելի գործարանի կուսակցական և արհմիութենական կազմակերպությունների ջանքերով վերանայվեցին մրցության կազմակերպման հին ձևերը։ Գործարանում սկսեցին լուրջ ուշադրություն դարձնել արտադրության բոլոր օղակներին՝ բանվորական տեղից, բրիգադից մինչև ձեռնարկությունն ամբողջությամբ վերցրած։ Սոցիալիստական մրցության և կոմունիստական շարժման գործի կազմակերպումը բարելավելու նպատակով ձեռնարկություններում ստեղծվեցին մրցության ղեկավարման գործարանային և արտադրամասային հատուկ

---

15 Բ. Հ. Մուրադյան, ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1966—1970 թվականների հնգամյա պլանի՝ ՍՄԿԿ XXIII համագումարի դիրեկտիվների նախագծի մասին, Երևան, 1966, էջ 4—5։

հանձնաժողովներ։ Գործարանային հանձնաժողովը, դիրեկցիան, կուսակցական և արհմիութենական կազմակերպությունները, ելնելով տնտեսավարման նոր սիստեմի պահանջներից, վերանայեցին և հաստատեցին ներգործարանային մրցության պայմանները, հատուկ տեղ հատկացնելով արտադրության արդյունավետության, խնայողության ռեժիմի, տնտհաշվարկի ամրապնդման, աշխատանքի որակի և մյուս սկզբունքային հարցերին։ Բավական է նշել, որ ձեռնարկության 2375 աշխատողներից 2215-ը, այդ թվում բանվորներ, արտադրամասերի պետեր, ինժեներատեխնիկական աշխատողներ, ծառայողներ ներգրավված էին անհատական սոցիալիստական մրցության մեջ[16]։ Արտադրամասային հանձնաժողովների կողմից ստեղծվեցին մշտական գործող 4 խմբեր, որոնք ամեն օր հետևողականությամբ վերլուծում էին խոտանի և թափոնների դեմ մղվող պայքարի արդյունքները։

Երևանի կաբելի գործարանում ստեղծվեց նաև կոմունիստական աշխատանքի համախարան, որի պարապմունքները սերտորեն համաձայնեցվեցին գործարանի և նրա արտադրամասերի կոնկրետ խնդիրների հետ։ Համալսարանի ունկնդիրներն ուսումնասիրում էին «Ինչպես խնայել պղինձը և ալյումինը», «Ինչպես արմատավորել տնտհաշվարկը յուրաքանչյուր աշխատանքային տեղամասում», «Բարոյական և նյութական խրախուսման կիրառումը», «Վարպետների դերը սոցիալիստական մրցության կազմակերպման գործում», «Ինչպես ես դարձա կոմունիստական աշխատանքի հարվածային» և այլ թեմաներ։

Հանրապետության արդյունաբերական շատ ձեռնարկություններում սահմանվեցին ոչ միայն համապատասխան ցուցանիշները, այլև մշակվեցին դրանց հասնելու կոնկրետ ուղիները։ Դա վկայում է պարտավորությունների կազմման նկատմամբ առավել լուրջ և մտածված մոտեցման դրսևորման մասին։

Արձագանքելով մոսկվացիների նախաձեռնությանը[17], Հայաստանում լայն մրցություն կազմակերպվեց ՍՄԿԿ XXIV համագումարի պատվին։ Հանրապետության ձեռնարկությունների կոլեկտիվները մայրաքաղաքի առաջավոր կոլեկտիվների օրինակով ի հայտ բերեցին արտադրության լրացուցիչ ռեզերվներ և վերցրեցին լրացուցիչ բարձր պարտավորություններ։

Մրցության մասնակիցները գլխավոր ուշադրությունը նպատակամղեցին արտադրության մեջ գիտության և տեխնիկայի նվաճումների արմատավորմանը, աշխատաժամանակի լավագույն կազմակերպմանը, հումքի և օժանդակ նյութերի այնպիսի քանակության խնայմանը, որը հնարավորություն տար 1—2 օր աշխատելու խնայված հումքի հաշվին[18]։ Այսպես, մտնելով ՍՄԿԿ XXIV համագումարի պատվին ծավալված սոցիալիստական մրցության մեջ, Երևանի Ս. Մ. Կիրովի անվան քիմիական կոմբինատի կոլեկտիվը լրացուցիչ կերպով ստանձնեց հետևյալ պարտավորությունները. 1970 թ. 2-րդ փիտամյակում մի շարք նյութերի հետ միասին պլանից դուրս թողարկել 500 տ կաուստիկ սոդա, 139 տ կրոտիլին, տալ 400 հազ. ռ. արտապլանային շահույթ, խնայել 500 հազ. կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա, 2000 հեկալիտր ջերմաէներգիա,

---

16 Архив ВЦСПС. ф. 1, оп. 44, д. 1334, л. 21.

17 Նույն տեղում, ց. 5, գ. 2442, թ. 256։

18 Նույն տեղում, ց. 44, գ. 1335, թ. 17։

կարբիդի որակը բարելավել 0,5 լ/դկ, թողարկել նոր մակնիշի քլոր-բենզոլ, տալ 100 հազ. ռ. խնայողություն, 2-րդ կիսամյակում լրիվ կերպով յուրացնել քացախաթթվի արտադրության նախագծային կարողությունները և պլանից դուրս արտադրել 55 տ քացախաթթու, ոչ պակաս 300 բանվորների օգնել նոր մասնագիտություններ ձեռք բերելու, բարձրացնել թվով 75 ապարատավարների և փականագործների որակավորումը[19]։

Կոմբինատի բազմաթիվ բրիգադներ և բանվորներ, այդ թվում 1—2 արտադրամասի Մ. Թոռչյանի գլխավորած կարբիդագործների բրիգադը, 1—8 արտադրամասի ապարատավարների բրիգադը՝ Ա. Ավանյանի գլխավորությամբ, 2—1 արտադրամասի կոմունիստական աշխատանքի հարվածային ֆրեզերագործ Ա. Ղազարյանը, 2—7 տեղամասի էլեկտրափականագործ Գ. Պոլիսչուկը և շատ ուրիշներ, արձագանքելով Կեմերովոյի Լենինի շքանշանակիր «Ազոտ» արտիավորման ապարատավար Վ. Կոլեսնիկովի հայրենասիրական նախաձեռնությանը, ՍՄԿԿ XXIV համագումարի պատվին կանգնեցին հարվածային հերթափոխի և վերանայեցին իրենց պլանային պարտավորությունները։ Սոցիալիստական մրցության լավագույն կազմակերպման շնորհիվ կոմբինատը հնգամյա պլանը կատարեց 1970 թ. հոկտեմբերի 20-ին։

Ձեռնարկության մեծ հաջողությունների գլխավոր պատճառներից մեկն այն էր, որ այստեղ արտադրության բոլոր օղակներում մշտապես քննարկվում էին մրցության արդյունքները, մրցողներին լայն օգնություն էր ցույց տրվում, անհրաժեշտ պայմաններ էին ստեղծվում ստանձնած պարտավորությունների կատարման համար։ Դա էր պատճառը, որ տարիներ շարունակ կիրովցիները հաջողությամբ էին կատարում պլանները և հանրապետությունում առաջինն արժանացան կոմունիստական ձեռնարկության կոչման։

8-րդ հնգամյակի տարիներին Հայկական ՍՍՀ մետալուրգիայի, մեքենաշինության, էլեկտրաարդյունաբերության, քիմիական և թեթև արդյունաբերության ձեռնարկություններում լայն տարածում ստացան միատեղ արտադրության, ինչպես նաև մկանման մասնագիտության բրիգադների և բանվորների մրցությունը։ Մրցությանն այս ձևը հնարավորություն տվեց ավելի ճշգրիտ կերպով համեմատել արդյունքները, բացահայտել և արմատավորել առաջավոր փորձը։ Հանրապետությունում զգալի արդյունք տվեց նաև այսպես կոչված հարակից ձեռնարկությունների սոցմրցությունը։ Այսպես, օրինակ, Լենինականի Լոսկաշինի անվան մանարան ֆաբրիկայի և տրիկոտաժի ֆաբրիկայի, Երևանի Կոշիկի «Մատիս» և Ստ. Շահումյանի անվան կաշվի արտադրության միավորման և մյուս համատեղ ձեռնարկությունների մրցությունը նպաստեց երկու կոլեկտիվների ուժերի լարմանը և արդյունավետ ներգործեց աշխատանքի որակի բարելավման վրա։ Հարակից ձեռնարկությունների միջև մրցությունը մեծ չափով նպաստեց նաև կոոպերացված մատակարարումների պլանների կատարմանը։

Պլանավորման և տնտեսական խթանման նոր մեթոդը բանվորներին ու ծառայողներին պարտադրեց առավել պահանջկոտությամբ մոտենալ աշխատանքի ընթացքում հանդիպող շատ երևույթների։ Այսպես, 1970 թ. մայիսին Մոսկվայի Լենինի և Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր «Դինամո» էլեկտրամեքենաշինական, էլեկտրատեխնիկական և Ս. Մ. Կիրովի անվան

---

19 ՄԼԻ արխիվ, ֆ. 82, ց. 24, գ. 6, թ. 108—109։

գործարանները սոցմրցման մեջ մտան յուրաքանչյուր բանվորի գծով 1970 թ. ոչ պակաս 100 աշխատանքային ժամ խնայելու և արտադրանքի թողարկման վրա կատարվող աշխատանքային ծախսերը կրճատելու համար։ Դա հնարավորություն տվեց միայն այս մեթոդով 1970 թ. աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել 7%-ով։

Հայաստանի արդյունաբերական ձեռնարկություններում նույնպես լայն ծավալ ստացան բանվորական ժամանակի յուրաքանչյուր րոպեի հաշվառման և խնայման համար տարվող աշխատանքները։ Երևանի Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանում, «Հայէլեկտրալույս» արտադրական միավորումում, Լենինականի Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատում և շատ այլ ձեռնարկություններում բանվորական ժամանակի խնայման նպատակով վերանայվեց արտադրության տեխնոլոգիան, կատարելագործվեցին արտադրանքի առանձին տեսակների պատրաստման պրոցեսները, մրցություն ծավալվեց արտադրաժամանակի կրճատման համար։ Աշխատաժամանակի կորուստների վերացման նպատակով հանրապետության կոմերիտականներն ակտիվորեն ներգրավվեցին աշխատանքային ժամանակի ամբողջ 420 րոպեն արդյունավետ օգտագործելու նշանաբանով ծավալված մրցության մեջ[20]։

Արդյունաբերության, շինարարության և տրանսպորտի ձեռնարկություններում մրցության առջև ծառացած բազմաթիվ նոր խնդիրները և կազմակերպման կատարյալ եղանակները հնարավորություն տվեցին լավագույն ձևով համեմատել աշխատանքի արդյունքները։ Կուսակցական կազմակերպությունները հանրապետության մի շարք գործարաններում, ֆաբրիկաներում ու կառույցներում արմատավորեցին մրցության արդյունքների ամենշաբաթյա ամփոփման եղանակը։ Արտադրամասերում կահավորվեցին լուսային ստենդներ՝ մրցության արդյունքներն ավելի ակնթարթ արտացոլելու համար։ Մրցության հրապարակայնության ի սպաս դրվեցին պատի թերթերը, բազմատիրաժները, ներքին ռադիոն և ցուցադրական ագիտացիայի մյուս միջոցները։

Մրցության զարգացման մտածված պլանների մշակումն ու արմատավորումը շատ ձեռնարկություններում ընդլայնեցին բազմահաստոցայինների թիվը։ Միաժամանակ հարյուրավոր բանվորներ տիրապետեցին մի շարք հարակից մասնագիտություններին։

Մրցության վրա կոմունիստների ներգործության լավագույն մեթոդ հանդիսացավ նրանց անձնական օրինակը։ Կոմունիստներին առաջատար դիրքերում պահելու անհրաժեշտությունը կուսակցական կազմակերպություններին պարտադրեց մշտապես զբաղվել ՍՄԿԿ անդամների և թեկնածուների գիտելիքների ու որակավորման բարձրացման հարցերով։ Յուրաքանչյուր կուսակցական կազմակերպությունում ստեղծվեց ստեղծագործական աշխատանքի մթնոլորտ, որպեսզի կոմունիստները, բարեխիղճ աշխատանքից բացի, հանդես գային արժեքավոր նախաձեռնություններով։ Կուսակցական ժողովներում և բյուրոյի նիստերում սկսեցին պարբերաբար քննության առնվել կոմունիստների հաշվետվությունները՝ մրցությամբ ստանձնած պարտավորությունների կատարման և արտադրության մեջ նրանց ավանգարդային դերի ապահովման վերաբերյալ։

---

20 Центральный архив ВЛКСМ, ф. 1, оп. 5, д. 1193, л. 212.

Սոցիալիստական մրցությանը կոմերիտականների ակտիվ մասնակցության ձևերից մեկը հանդիսացավ նրանց կողմից ժողովրդատնտեսական առավել կարևոր շինարարական օբյեկտների շեֆությունը ստանձնելը։ Յոթնամյակի ընթացքում ստեղծվեցին 230 կոմերիտական-երիտասարդական բրիգադներ, 10 խոշոր օբյեկտներ հայտարարվեցին կոմերիտական հարվածային կառույցներ[21]։

Սոցիալիստական մրցության արդյունավետ եղանակների կիրառման շնորհիվ Հայաստանի արդյունաբերության մեջ հետզհետե կրճատվեց պետական առաջադրանքները չկատարող բանվորների թիվը։ Միայն կոմերիտական կազմակերպությունների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ 1964—1966 թթ. պետական առաջադրանքները չկատարող երիտասարդ բանվորների թիվը հանրապետությունում կրճատվեց 4000-ով[22]։

Նոր պայմաններում կատարելագործվեց նաև առաջավորների նյութական խրախուսման պրակտիկան։ Բոլոր բաժինները, արտադրամասերը բաժանվեցին ըստ խմբերի։ Որոշվեցին «մասնագիտության մեջ լավագույն»-ի կոչման համար բանվորների մրցության հավելյալ վարձատրության չափերը։ Գործարանային կոմիտեները և տնտեսական ղեկավարները մշակում էին մրցության համապատասխան պայմաններ, որտեղ մատնանշվում էին հիմնական և լրացուցիչ ցուցանիշները, որոնց համար պետք է պայքարեր կոլեկտիվը։ Խրախուսման չափը ուղղակի պայմանավորվում էր սոցիալիստական մրցության ժամանակ արտադրամասի գրաված տեղից։ Այս միջոցառումները զգալիորեն մեծացրին աշխատավորների հետաքրքրությունը մրցության նկատմամբ և բարձրացրին նրանց աշխատանքային ակտիվությունը։ Աշխատավորական լայն զանգվածներն սկսեցին ուշադրությամբ հետևել մրցության ընթացքին, վերլուծել յուրաքանչյուր ցուցանիշի թերակատարման պատճառները, ակտիվություն հանդես բերել մրցության արդյունքների ամփոփման գործում։

8-րդ հնգամյակի հենց առաջին օրերից համամիութենական սոցիալիստական մրցության հաղթողներին խրախուսելու նպատակով ստեղծվեցին ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի և ՀԱՄԿԽ-ի 813 փոխանցիկ կարմիր դրոշներ, միութենական մինիստրությունների, գերատեսչությունների և ճյուղային արհմիությունների կենտկոմների գծով՝ 1658 դրոշներ[23]։

Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհուրդը և ՀԱՄԽ-ն իրենց հերթին հանրապետական մրցության մեջ առաջին տեղերը զբաղեցնողների համար սահմանեցին 21 փոխանցիկ դրոշ, իսկ մինիստրությունների, գերատեսչությունների, ճյուղային արհմիությունների կենտկոմները՝ 41 փոխանցիկ կարմիր դրոշ։ Սահմանվեց նաև 56 դրամական պարգև 1-ին տեղը և 54 պարգև՝ 2-րդ տեղը գրավողների համար[24]։

Ստեղծագործական մրցության մեջ հանրապետությունում աճեցին իրենց գործի հազարավոր վարպետներ։ Դրանցից էին Վ. Ի. Լենինի անվան հայ-էլեկտրամեքենաշինական գործարանի փականագործ Ա. Գասպարյանը, Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական գործարանի կարբիդագործ-

21 Նույն տեղում, ց. 22, գ. 22, թ. 28։
22 Նույն տեղում, ց. 26, գ. 67, թ. 14։
23 ЦГАОР СССР, ф. 5451, оп. 24, д. 2419, л. 43.
24 Նույն տեղում, թ. 44։

ների բրիգադավար Ա. Թամրազյանը, «Պոլիվինիլացետատ» գործարանի փա-
կանագործների բրիգադավար Ռ. Քոլոզյանը, Քաջարանի պղնձամոլիբդենա-
յին կոմբինատի էքսկավատորավար Ա. Առաքելյանը, Սևանի ապակե մեկու-
սիչների գործարանի բանվորուհի Ն. Նևերովան, Ալավերդու լեռնամետալուր-
գիական կոմբինատի ձուլող Հ. Աբելյանը և ուրիշներ։ Կուսակցական և արհ-
միութենական կազմակերպությունների հմտորեն կազմակերպած սոցիալիս-
տական մրցությունը մեծապես նպաստեց մարդկանց գիտակցական մակար-
դակի բարձրացմանը։

Սոցիալիստական մրցության ընթացքում ձևավորվեցին հիանալի ար-
տադրական կոլեկտիվներ, որոնք հանրային աշխատանքի արտադրողակա-
նության բարձրացման համար պայքարի լավ օրինակներ ցույց տվեցին։
Հանրապետության ձեռնարկությունների գերակշռող մասը ժամկետից շուտ
կատարեց պետական թոլոր առաջադրանքները։

1966—1970 թթ. Հայաստանում արդյունաբերական արտադրանքի ծա-
վալը ավելացավ մոտ 1,8 անգամ։ Եթե 1961—1965 թթ. արդյունաբերության
աճի միջին տարեկան տեմպերը կազմել էին 9,4%, ապա 8-րդ հնգամյակում
դրանք հասան 12,5%-ի[25]։ Յոթնամյակի առաջադրանքները ժամանակից շուտ
կատարելու և արտադրանքի թողարկումը ավելացնելու համար Քաջարանի
պղնձամոլիբդենային կոմբինատը պարգևատրվեց Լենինի շքանշանով, իսկ
Երևանի Վ. Ի. Լենինի անվան հայէլեկտրամեքենաշինական գործարանը,
Ս. Մ. Կիրովի անվան քիմիական, Լենինականի Մայիսյան ապստամբության
անվան տեքստիլ կոմբինատները և Հայկական ՍՍՀ շինարարության մի-
նիստրության «Երքիմշին» տրեստը՝ Աշխատանքային կարմիր դրոշի շքա-
նշանով։ 8-րդ հնգամյակի առաջադրանքների հաջող կատարման համար Աշ-
խատանքային կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեցին Ագարակի
պղնձամոլիբդենային կոմբինատը, Երևանի «Հայէլեկտրալույս» արտադրա-
կան միավորումը, Ֆ. Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանը,
Երևանի Ստ. Շահումյանի անվան կաշվի արտադրական միավորումը, Հոկ-
տեմբերյանի պահածոների գործարանը, «Երարդշին» տրեստը և Հայկական
ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը։

Յոթնամյակի և 8-րդ հնգամյակի տարիներին սոցիալիստական մրցու-
թյան մեջ ձեռք բերած արտադրական բարձր ցուցանիշների համար Հայկա-
կան ՍՍՀ հազարավոր բանվոր-ծառայողներ արժանացան կառավարական
բարձր պարգևների։ Այսպես, սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման
արժանացան Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի էքսկավատորա-
վար Ա. Պետրոսյանը, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի երկրաբանական վար-
չության հետախուզական խմբի հորատող Վ. Ամիրխանյանը, Երևանի
Վ. Ի. Լենինի անվան մետաքսի կոմբինատի ջուլհակուհի Ս. Գալեմտերյանը,
Լենինականի Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատի են-
թավարպետ Գ. Տոնոյանը, Երևանի Վ. Ի. Լենինի անվան հայէլեկտրամեքե-
նաշինական գործարանի դիրեկտոր Ռ. Ամիրյանը, Երևանի գինու կոմբինատի
բրիգադավար Ա. Ֆրանգուլյանը, «Հայէլեկտրամոնտաժ»-ի № 1 վարչության
էլեկտրիկ Օ. Խաչատրյանը։ Լենինի շքանշանով պարգևատրվեցին Ալավերդու

---

25 Стенографический отчет XXV съезда Коммунистической партии Армении от 25—26 февраля 1971 г.», стр. 17.

լենամետալուրգիական կոմբինատի ավագ ֆուրմավար Հ. Ալավերդյանը, Կիրովականի Ալ. Սյասսրսյանի անվան քիմիական գործարանի ավագ վարպետ Ա. Ազարյանը, «Պոլիվինիլացետատ» գործարանի ավագ ապարատավար Ղ. Ասատրյանը, Երևանի ավտոդողերի գործարանի դիրեկտոր Ս. Բոյախչևը և սոցիալիստական մրցության բազմաթիվ այլ առաջավորներ։

Այսպիսով, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը յոթնամյակի և 8-րդ հնգամյակի տարիներին լայն գործունեություն ծավալեց սոցիալիստական մրցությանը առավել մասսայական և զորեղ դարձնելու, մրցությունն արտադրական պլանների ժամանակին և որակով կատարելու կարևոր գործոն դարձնելու ուղղությամբ։ Սոցիալիստական մրցությունը, լինելով արտադրողական ուժերի և արտադրողական հարաբերությունների հզոր առաջմղիչ, մեծապես նպաստեց մեր հանրապետությունում յոթնամյակի և 8-րդ հնգամյակի պլանների կատարմանը։

## ПАРТИЙНОЕ РУКОВОДСТВО СОЦИАЛИСТИЧЕСКИМ СОРЕВНОВАНИЕМ

СТЕПАН МКРТЧЯН

### Резюме

Социалистическое соревнование, рожденное общественными отношениями социализма,—гигантское по размаху и глубине движение народных масс, способ интенсивного воздействия на рост производительности труда, повышение эффективности общественного производства, качества работы, дальнейшее развитие и совершенствование экономических, социальных и других общественных отношений социалистического общества.

Коммунистическая партия Армении в период между 1959—1970 гг. среди мероприятий, обеспечивающих успехи развития промышленности республики, придавала важное место социалистическому соревнованию.

Под руководством партийных организаций в Армении социалистическое соревнование приобрело некоторые новые, соответствующие современному этапу коммунистического строительства черты массового движения трудящихся. Богатый и разносторонний фактический материал раскрывает суть руководства социалистическим соревнованием партийными организациями промышленных предприятий Армянской ССР в условиях развитого социализма.